



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ**»

*Ա. Միշակյան* Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«27» 03 2017թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 30

**Ձեռնարկողը՝**

**«ՖՈՒԼ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ**

Ք. Երևան, Էրեբունի համ., Քրիստափորի 8

**Գործունեությունը՝**

Կանչ համայնքի օբսիդիանի երևակման առաջին և երկրորդ փեղամասերում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ  
«Արագածոտնի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 30

<27> 03 2017թ.

**«Արագածոտնի մարզի Կանչ համայնքի օբսիդիանի երևակման առաջին և երկրորդ տեղամասերում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ»**


*Արագածոտնի մարզի Կանչ համայնքի օբսիդիանի երևակման առաջին և երկրորդ տեղամասերում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*

Ձեռնարկող՝	<<ՖՈՒԼ ՍԹՈՈՒՆ>> ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	<<Արագածոտնի մարզ, Կանչ համայնք

«ՖՈՒԼ ՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է << Արագածոտնի մարզի Կանչ համայնքի օբսիդիանի երևակման՝ առաջին (2.89 հա) և երկրորդ (3.06 հա) տեղամասերի սահմաններում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով իրականացնել ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն: Ծրագրի մշակման նպատակն է 2017-2019թթ. ընկած ժամանակահատվածում ընկերության կողմից գործունեության համար նախատեսվող մոտ՝ 5.95 հա տարածքի վրա իրականացնել համալիր երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ ուղեկցելով դրանք մակերևութային լեռնային փորվածքների անցման, մինչև 30մ խորությամբ հորատանցքերի հորատման և բացահանքերի անցման աշխատանքներով: Նշված աշխատանքների դրական արդյունքների դեպքում կառանձնացվեն տեղամասեր, որոնցում ստացված տվյալների հիման վրա կկատարվի C1 կարգով պաշարների հաշվարկ և P1 կանխատեսումային ռեսուրսների գնահատում:

<< Արագածոտնի մարզի օբսիդիանի երևակումը գտնվում է << Արագածոտնի մարզի Կանչ համայնքի վարչական սահմանում, Արագածավան գյուղից 9-10 կմ արևմուտք: Մոտակա բնակավայրերն են Հակո և Արեգ գյուղերը: Ուսումնասիրության ենթակա <<Կանչ>> տարածքը բաղկացած է 2 տեղամասից, որոնց ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են.

- |                         |                        |
|-------------------------|------------------------|
| 1-ին տեղամաս /2.89 հա/  | 2-րդ տեղամաս /3.06 հա/ |
| 1. x=4471163 y=8391148  | 1. x=447094 y=8391673  |
| 2. x=4471163 y=8391318. | 2. x=4470943 y=8391848 |
| 3. x=4470993 y=8391318  | 3. x=4470768 y=8391848 |
| 4. x=4470993 y=8391148  | 4. x=4470768 y=8391673 |



Օբսիդիանների օգտակար հաստվածքը գենետիկորեն կապված է ստորին պլիոցենի Ողջաբերդի շերտախմբի լավային կոմպլեքսի ապարների հետ, որոնք ներկայացված են ռեոլիտներով, պեոլիտներով և օբսիդիաններով: Շրջանում բնական ջրային ցանցը թույլ է զարգացած՝ ապարների բարձր ջրաթափանցելիության և տեղումների սակավության պատճառով: Այն հիմնականում ներկայացված է սելավային հոսքերի հեղեղատներով, որոնք ունեն սեզոնային բնույթ: Տեղամասից հարավ-արևմուտք անցնում է Մաստարա սելավատարը:

Ուսումնասիրվող տարածքում օբսիդիանների առկայության ճշտման, գնահատման ինչպես նաև տեղամասի համար 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով 5.95 հա տարածքի վրա նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ: Ելնելով հետախուզման համար հատկացված տարածքի չափերից, տեղամասի հետախուզումն իրականացվելու է երկրաբանական երթուղիների, մեխանիկական հորատման, սյունակային հորատանցքերի, հետախուզաառուների, մաքրվածքների և նմուշարկման միջոցով: Համաձայն նախագծային փաստաթղթի ուսումնասիրվող տարածքում նախատեսվում է կատարել 2կմ երկարությամբ երթուղիներ: Նախագծված տարածքի երևակման տեղամասում հետախուզման և գնահատման նպատակով իրականացվող աշխատանքները ներառում են.

- տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ,
- 200 գծ.մ.հորատանցքերի անցում,
- 2 փորձնական բացահանքի անցում և 1տ ծավալով փորձնական հանույթ:

Հանքայնացված գոտիների հզորությունը, ձգվածությունը, տարածման և բաշխման օրինաչափությունները, ինչպես նաև օբսիդիանների մարմինների մորֆոլոգիան պարզելու նպատակով նախատեսվում է հետախուզաառուների անցում: Առուների խորությունն ընդունվել է 1.5մ, լայնությունը՝ 0.8մ, իսկ երկարությունը մինչև 20մ: Հետախուզաառուների անցումը IV կարգի ամրության ապարներում իրականացվելու է ձեռքի աշխատանքներով: <<Կանչ>> տարածքում նախատեսվում է անցնել 2 հետախուզաառու, ընդհանուր 40գծ.մ. երկարությամբ, որոնց աշխատանքների ծավալը ընդհանուր կկազմի 48մ<sup>3</sup>:

Խրամների անցումը նախատեսված է իրար հարևան հետախուզաառուների միջև, 1տ լեռնային զանգվածում, որն ամբողջությամբ կներառի մեկ նմուշում: Խրամների խորությունն ընդունված է մինչև 2մ, երկարությունը՝ 30մ, լայնությունը՝ 1.25մ: Նախատեսվում է անցնել 60մ ընդհանուր երկարությամբ 2 խրամ, որոնց մակերեսը կկազմի 75մ<sup>2</sup>, իսկ աշխատանքների ծավալը՝ 150 մ<sup>3</sup>: Ապարների քիմիական և պետրոգրաֆիական կազմերն ուսումնասիրելու նպատակով վերցվելու են 2-ական կետային և պետրոգրաֆիական նմուշներ: Վերցված նմուշները պետք է ուսումնասիրվեն մասնագիտացված լաբորատորիաներում:

Հորատման աշխատանքներն իրականացվելու են 93 և 76մմ տրամագծով ալմաստե թագիկներով հորատող հաստոցով: Հորատման ընտրված եղանակով հանքային գոտիներից և մարմիններից պետք է ապահովի 90%-ից ոչ պակաս հորատահանուկի ելք: Հորատման աշխատանքներն իրականացվելու են կավային կամ պոլիմերային լուծույթների օգտագործմամբ: Հորատման աշխատանքների ծավալները ներկայացված են.

- ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ առաջացումներ - IV կարգ (50 գծ.մ):
- պերլիտներ -VI -IX կարգ (150 մ)

Նախատեսվում է 10 հորատման հարթակների /որոնց համար 1000մ<sup>2</sup> զբաղեցրած մակերեսում վերականգնման ենթակա հողային շերտի ծավալը կկազմի՝ 200մ<sup>3</sup>/ և դրանց մոտեցման ճանապարհների կառուցում մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում: Նշված աշխատանքների իրականացման համար ծրագրով նախատեսվում է.

- նորոգել 1 կմ ճանապարհ (4մ լայնությամբ և 0.2մ խորությամբ)



- բացել 0.5կմ երկարությամբ մոտեցման ճանապարհ՝ դեպի հորատման հարթակներ:  
Տեղամասում այդ աշխատանքների ծավալը կկազմի 1800մ<sup>3</sup>:

Նախնական գնահատման հայտում ներկայացվել է ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա /հող, ջուր մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն/ հնարավոր ազդեցությունները, որոշվել է վերջիններիս վնասակարության աստիճանը և մշակվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր, որոնք ուղղված են նախատեսվող աշխատանքների ժամանակ հնարավոր ծխագազերի և անօրգանական փոշու արտանետումների նվազեցմանը, վառելիքի և նավթամթերքների հնարավոր արտահոսքերի կանխմանը, հողային ռեսուրսները և շրջակա տարածքները աղտոտումից գերծ պահելուն:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախատեսվել են միջոցառումներ: Պահպանության ենթակա բուսաշերտի ծավալը, որը 0.2մ հզորությամբ, վերականգնման ենթակա՝ 1310մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսում գնահատվել է 262մ<sup>3</sup>, պահեստավորվելու է այդ նպատակի համար նախատեսված վայրում՝ հետագայում հետախուզական աշխատանքների ավարտից հետո վերգետնյա փորվածքների և հորատման հարթակների խախտված տարածքներում վերականգնման նպատակով օգտագործելու համար: Հողաբուսածածկի շերտով տարածքների վերականգնման աշխատանքները կատարվելու են ձեռքով՝ III-րդ կարգի գրունտներում: Ռեկուլտիվացիայի իրականացման համար նախատեսվող ծախսերը գնահատվել են 157.200 ՀՀ դրամ: Տարածքների վերականգնման աշխատանքները ներառում են նաև տվյալ տարածքին բնորոշ բուսատեսակներով ցանքս, կամ ճմապատում, ինչի իրականացման պարագայում բարձրացնում է հողի հակաէրոզիոն հատկությունները:

Նախագծային փաթեթում շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ ներկայացվել է բնապահպանական մշտադիտարկումների պլան, որի իրականացման համար նախատեսվող ծախսերը, որն ընդհանուր գնահատվել է 200.0 հազ.դրամ: Ծրագրով երկրաբանական ումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակացույցը նախատեսվել է 3 տարի: Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում 14.03.2017թ ՀՀ Արագածոտնի մարզի Կանչ համայնքում անցկացվել է հանրային քննարկումներ: Քննարկումների ժամանակ ծրագրի իրականացումը հանրության կողմից արժանացել է հավանության:

Հայտում ներկայացված բնապահպանական ազդեցությունների մեղմացման միջոցառումների ապահովման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

### ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՖՈՒԼ ՍԹՈՒՆ» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Կանչ համայնքի օբսիդիանի երևակման առաջին և երկրորդ տեղամասերում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Գլխավոր մասնագետ՝



*[Handwritten signature]*

Հ. Մկրտչյան